

ՆՈՐԻՆ
ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԵՐԳ
ԱՂՕԹԱԿԱՆ Ի ԴԷՄՍ ՍՐԲՈՅ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ
նաև
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐՈՅ ԴԻՄԻ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԻ

Առաւօտ լուսոյ, արեգակն արդար,
առ իս լոյս ծագեա՛:
Բղխումն ի Հօրէ, բղխեա՛ ի հոգւոյս
բան քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան, գանձիդ ծածկելոյ
գտող զիս արա՛:
Դուռն ողորմութեան, դաւանողիս բա՛ց,
դասեցո՛ վերնոցն:

Երրեակ միութիւն, եղելոց խնամող,
և ինձ ողորմեա՛:
Զարթի՛ր, Տէ՛ր, յօգնել, զարթո՛ զթմրեալս,
զուարթնոց նմանիլ:

Էդ Հայր անսկիզբն, էակից Որդի,
է միշտ սուրբ Հոգի:
Ընկա՛լ զիս, գթած, ընկա՛լ ողորմած,
ընկա՛լ, մարդասէր:

Թագաւոր փառաց, թողութեանց տուող,
թո՛ղ ինձ զյանցանս:
Ժողովող բարեաց, ժողովեա՛ և զիս
ժողովս անդրանկաց:

Ի քէն, Տէ՛ր, հայցեմ, ի մարդասիրէդ
ինձ բժշկութիւն:
Լե՛ր կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս,
լուծանող ցաւոյս:

Խորհրդոց դիտող, խաւարիս շնորհեա՛
խորհուրդ լուսաւոր:
Ծնունդ Հօր ծոցոյ, ծածկելոյս ստուերաւ
ծագեա՛ զլոյս փառաց:

Կենարար Փրկիչ, կեցո՛ զմեռեալս,
կանգնեա՛ զգլորեալս:
Հաստեա՛ հաւատով, հաստատեա՛ յուսով,
հիմնեցո՛ սիրով:

Զայնիւս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ,
ձիր բարեաց շնորհեա՛:
Ղամբարամբ լուսոյ, ղեկավար ճարտար,
ղօղեալս ամրացո՛:

Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցո՛յց,
ճեպել ի յերկինս:
Միածինդ Հօր, մո՛յծ զիս յառագաստ
մաքուր հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք յահագին աւուրն,
յիշեա՛ զիս, Քրիստոս:
Նորոգող հնութեանց, նորոգեա՛ և զիս,
նորոգ զարդարեա՛:

Ծնորհատու բարեաց, շնորհեա՛ զքաւութիւն,
շնորհեա՛ զթողութիւն:
Ուրախացո՛, Տէ՛ր, ոգւոյս փրկութեամբ:
ոյր վասն եմ ի սուգ:

Զար մշակողին, չար սերմանց նորին
չորացո՛ զպտուղն։
Պարգևիչ բարեաց, պարգևեա՛ իմոց
պարտեացս թողութիւն։

Զուր շնորհեա՛ աչացս, ջերմ հեղուլ արտասր,
ջնջել զյանցանս։
Ոետինդ քաղցու, ռամ հոգւոյս արբո՛,
ռահ ցոյց ինձ լուսոյ։

Սէր անուն Յիսուս, սիրով քով ճմլեա՛
սիրտ իմ քարեղէն։
Վասն գթութեանդ, վասն ողորմութեանդ
վերստին կեցո՛։

Տենչալոյդ տեսլեամբ տո՛ւր ինձ յագենալ,
Տէր Յիսուս Քրիստոս։
Բաբունդ երկնաւոր, բոտեա՛ զաշակերտս
բամից երկնայնոց։

Ցօղ արեան քո, Տէ՛ր, ցօղեա՛ ի հոգիս,
ցնծասցէ անձն իմ։
Իւծեալս մեղօք, ւիւծեալ աղաչեմ,
ւիւսել ինձ բարիս։

Փրկիչ բոլորից, փութա՛ զիս փրկել
փորձութեանց մեղաց։
Քաւիչ յանցանաց, քաւեա՛ զօրհնաբանս,
քեզ երգել զփառս։

Սուրբ Աստուածածնին բարեխօսութեամբն
յիշեա՛, Տէր, և ողորմեա՛։